ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 17.07.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2019/41

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի, քննելով ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կարիքների համար երաժշտական և արվեստի դպրոցների համար երաժշտական գործիքների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀՀՄՆ-ԳՀԱՊՁԲ-19/33» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում «Սոնատինա» ՍՊԸ-ի կողմից 18.06.2019թ. ներկայացված և 18.06.2019թ. վարույթ ընդունված բողոքը (հետայսու նաև՝ ԳԲՔԱ-ՆԳ-2019/41 բողոք), պարզեցի հետևյալը.

1. «Սոնատինա» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Սոնատինա» ՍՊԸ-ն (հետայսու նաև՝ Ընկերություն) 18.06.2019թ. ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

Ընկերությունը 26.04.2019թ «ՀՀՄՆ-ԳՀԱՊՁԲ-19/33» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին (հետայսու նաև՝ Ընթացակարգ) ներկայացրել է

մասնակցության հայտ և հայտի շրջանակներում Ընկերությունը քսանմեկ չափաբաժիններից տասնչորս չափաբաժիններով ճանաչվել է առաջին տեղը զբաղեցնող մասնակից/հիմք թիվ 2 արձանագրություն/: Սակայն Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից Ընկերության հայտը ճանաչվել է անբավարար /հիմք թիվ 5 արձանագրություն/ պատճառանանությամբ, որ Ընկերությունը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունեցել է հարկային մարմինների կողմից վերահսկվող եկամուտների գծով 135000 դրամ դրոշմանիշային վճարների գծով ժամկետանց պարտավորություն /հիմք «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի պահանջի այն է/ մեջբերում. հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի, քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ./:

Ընկերությունը հայտնել է, որ հարկային մարմինների կողմից նշված պարտավորությունն Ընկերությանը պատշաճ չի ծանուցվել /հիմք 245-Ն 2016թ. «Դրոշմանիշային վճարների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդված 4-րդ մաս/:

Ընկերությունը սույն ծածկագրով գնման գործընթացին մասնակցելու հայտի օրվա դրությամբ հարկային մարմինների կողմից վերահսկվող հարկային պարտավորություն-ների գծով ունեցել է 314,0 հազար դրամ գերավճար /կամ միասնական հաշվում առկա մնացորդ/: Նշված գերավճարի առկայության պայմաններում Ընկերության ընդհանուր պարտավորությունների սալդոն դրական է, որը կազմում է 179,0 հազար դրամ /314.0-135.0=179.0/: Այն փաստը, որ Ընկերությունը դրոշմանիշային վճարների պարտավորության վերաբերյալ օրենքի համաձայն պատշաճ չի ծանուցվել կարելի է փաստել, որ դրոշմանիշային վճարների վերաբերյալ հայտի ներկայացման օրվա դրությամբ առկա ժամկետանց պարտավորությունը կարելի է չդիտարկել, հաշվի առնելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի հիմնական գերակա դրույթների առկայությունը: Մասնավորապես. համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի՝ նույն օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝

1) պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ.

2) գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

2. Գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.:

Ընկերությունը հայտնել է, որ հարկային մարմինների կողմից վերհասկվող եկամուտներ եզրույթում առկա է տարընթերցում, նկատի ունենալով այն, որ հարկային մարմինների կողմից իրականացվող վերահսկողությունը տարբեր հարկային և այլ վճարների գծով, իրականացվում են ոչ միասնական կարգով և օրենքներով /մասնավորապես՝ ՀՀ հարկային օրենսգիրք և 2016թ-ի թիվ ՀՕ-245-Ն օրենքի դրոշմանիշային վճարների վերաբերյալ 13 հոդված/: Ուստի գնումներին մասնակցելու իրավունքի մասով հրավերի պարզաբանումները կարելի էր ավելի հասկանալի և պարզաբանված ներկայացվել, մասնավորապես առանձին նշելով դրոշմանիշային վճարների գծով պարտավորությունների մասին:

Ընկերությունը տեղեկացրել է, որ սույն Ընթացակարգի տասնչորս չափաբաժինների գծով պատվիրատուի օգտին ներկայացրել է բավական շահեկան գներ և ճանաչվել է հաղթող: Նաև տարիներ շարունակ զբաղվել է երաժշտական գործիքների և պարագաների պրոֆեսիոնալ առևտրով, բազմիցս պետական կարիքների համար եղել է պատշաճ մատակարար, ունի մասնագիտական արհեստավարժ աշխատանքային ռեսուրսներ, երբեք չի ունեցել ֆինանսական և հարկային ժամկետանց պարտավորություններ: Համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ կետի՝ մասնակիցը պետք է բավարարի հրավերով սահմանված որակավորման չափանիշները: Մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող՝

1) մասնագիտական գործունեության համապատասխանություն պայմանագրով նախատեսված գործունեությանը.

2) մասնագիտական փորձառություն.

3) տեխնիկական միջոցներ.

4) ֆինանսական միջոցներ.

5) աշխատանքային ռեսուրսներ/:

Սույն հոդվածի պահանջները հաշվի առնելով կարելի է փաստել որ, Ընկերությունը լիիրավ կարող է մասնակցել մրցույթի պայմանագրի կնքմանը և պատշաճ իրականացնել իր կողմից ներկայացված գնային առաջարկի արդյունքում առաջին տեղը զբաղեցրած տասնչորս չափաբաժինների գծով մատակարարումներին:

Նաև «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջներից /մեջբերում չեն կարող սահմանվել մասնակցի՝ գնումներին մասնակցելու իրավունքի և որակավորման հետ կապված այնպիսի չափանիշներ, որոնք՝

1) նախատեսված չեն սույն հոդվածով.

2) խտրական են և սահմանափակում են մրցակցությունը՝ անհիմն կերպով բարդացնում կամ պարզեցնում են հնարավոր մասնակցությունը գնման գործընթացին.

3) համարժեք չեն՝ ուղղակիորեն չեն բխում պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման անհրաժեշտությունից/, ինչպես նաև «Գնումների մասին» ՀՀ օրենքի վերը նշված բոլոր հոդվածներից և դրույթներից ելնելով, Ընկերությունը գտնում է, որ Ընթացակարգի՝ Ընկերության կողմից հաղթած չափաբաժինների գծով մատակարարումների անտեղի խոչընդոտումները կարող են ՀՀ պետական բյուջեի միջոցներին հասցնել էական վնասներ, խափանելով օրենքի այն հիմնական դրույթը, որը վերաբերվում է պետության կողմից արդյունավետ և օգտավետ գնումներ իրականացնելուն /տես «Գնումների մասին» ՀՀ օրենքի հոդված 3.2/:

Ի հավելումն նշված պարզաբանումների և առարկությունների, Ընկերությունը տեղեկացրել է, որ Ընկերությունը վերը նշված 135 000 դրամի դրոշմանիշային վճարի ժամկետանց պարտավորությունը մարել է անմիջապես, երբ տեղեկացվել է դրա գոյության մասին:

Ընկերությունը բողոքով խնդրել է պարտավորեցնել Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնել «Սոնատինա» ՍՊԸ-ի ներկայացված հայտը անբավարարար ճանաչելու որոշումը:

Ի լրումն բողոքի՝ 01.07.2019թ. ներկայացված գրությամբ «Սոնատինա» ՍՊԸ-ն հայտնել է հետևյալը.

Ընկերությունը շուրջ տաս տարի զբաղվում է երաժշտական գործիքների և պարագաների մանրածախ և մեծածախ առևտրով: Գործունեությունը իրականացվում է պրոֆեսիոնալ երաժիշտ-մասնագետների միջոցով, և խանութը հանդիսանում է մասնագիտացված:

Ընկերութունը հանդիսանում է մի շարք արտասահմանյան երկրների հայտնի ընկերությունների պաշտոնական նեկայացուցիչը Հայաստանի Հանրապետությունում, ինչպիսիք են՝ Petrof (Չեխիա), Weinbach (Չեխիա), Kurzweil (ԱՄՆ), Amati (Չեխիա), RS Berkeley (ԱՄՆ), Sanchez Guitars (Իսպանիա), Alhambra Guitars (Իսպանիա), Larsen Strings (Դանիա), Thomastik Infeld (Ավստրիա), Pirastro (Գերմանիա), Vandoren (Ֆրանսիա), Orla (Իտալիա), Buffet Crampon (Ֆրանսիա), B&S (Գերմանիա), Aileen Music (Չինաստան), Rumberger (Գերմանիա), Aim Gifts (ԱՄՆ) և վերը նշված կազմակերպությունների շրջանակում վայելում է վստահելի և պարտաճանաչ գործընկերոջ համբավ:

Ընկերությունը իր հիմնադրման օրվանից որդեգրել է երաժշտական դպրոցների, քոլեջների, Երևանի Կոմիտասի անվան կոնսերվատորիայի ուսանողների նկատմամբ առանձնահատուկ մոտեցում և կիրառում է ճկուն զեղչային համակարգ: Հատկապես դպրոցականների համար իրականացվում են գործիքների և պարագաների օգտագործման անվճար խորհրդատվություններ և երաժշտական գործիքների անվճար նորոգում:

Երաժշտական գործիքների մատակարարման գծով «ՀՀ ՄՆ–ԳՀԱՊՁԲ-19/33» ծածկագրով մրցույթի շրջանակներում Ընկերությունը քսանմեկ չափաբաժիններից տասնչորս չափաբաժինների գծով հանդիսանալով առաջին տեղը զբաղեցրած մասնակից, նախապես բանակցություններ է իրականացրել «Aileen Music» հանրահայտ երաժշտական գործիքներ արտադրող-Ընկերության հետ՝ հետագա պատվերների և գների հստակեցման վերաբերյալ: Տեղեկանալով, որ նշված գործիքները հատկացվելու են ՀՀ երաժշտական

դպրոցների սաներին, Ընկերության Գործընկերը տրամադրեց գների հատուկ զեղչային համակարգ, որի արդյունքում Ընկերությունը կարողացավ ներկայացնել նվազագույն գնով՝ բարձր որակական հատկանիշներով երաժշտական գործիքներ:

Ընկերությունը հայտնել է, որ բանակցությունների արդյունքում՝ մրցույթի տեխնիկական բնութագրերից բխող պահանջների կատարման նպատակով, արդեն իսկ իրականացվում են գործիքների պատրաստման աշխատանքներ: Ընկերությունը վստահ է, որ ներկայացված պատվերները չեղարկելու դեպքում Ընկերության և Ընկերության գործընկերոջ հարաբերություններում կառաջանա անվստահություն: Կվնասվի տարիների ընթացքում ձեռք բերված գործընկերոջ բարի համաբավը, որն էլ բացասաբար կանրադառնա առևտրային Ընկերության փոխահարաբերությունների վրա: Մասնավորապես նշված ընկերության կողմից մեր նկատմամբ կիրառվող զեղչեր հետագայում կարող են չտրամադրվել: Նշված խնդիրը ուղղակիորեն կապված է ձեռք բերվող ապրանքների վաճառքի ժամանակ ուսանողներին և դպրոցականներին տրամադրվող զեղչերի հետ: Բնականաբար նշված մրցույթին Ընկերության հետագա մասնակցության մերժումը կառաջացնի նաև Ընկերության համար անցանկալի ֆինանսական խնդիրներ, ինչպես նաև գործարանի կողմից Ընկերության նկատմամբ կարող են կիրառվել տույժեր և ներկայացվել իրականացված ծախսերի փոխհատուցման պահանջ:

Ընկերությունը կարծում է, ՀՀ-ում սույն գնումների գործընթացի ընթացքում առաջացած խնդիրների շուրջ Ընկերության գործընկերոջը ներկայացված բացատրությունները լուրջ չեն ընկալվի:

Ընկերությունը հայտնել է, որ նկատի ունենալով վերը նշվածը, ինչպես նաև այն, որ ներկայումս ՀՀ կառավարության կողմից իրականացվում են քայլեր և գործադրվում են ջանքեր տնտեսական քաղաքականության սոցիալական, ինչպես նաև՝ բյուջեի արդյունավետ և նպատակային օգտագործման ուղղությամբ, անկնկալվում է նշված խնդիրների նկատմամբ փոխադարձ ըմբռնում և դրական լուծում, հիմք ունենալով 24.06.2019թ. նիստին Ընկերության կողմից ներկայացված պատճառաբանությունները և իրավական հիմքերը, ինչպես նաև՝ տվյալ նիստին առնչվող նմանատիպ բողոքների ձևավաչափում նախկինում եղած դրական լուծումների նախադեպերը:

«Սոնատինա» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 24.06.2019թ. ժամը 10:00-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցիչների մասնակցությունը, ովքեր պնդել են վերոհիշյալ դիրքորոշումը:

2. ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումը և հիմնավորումները.

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը (հետայսու՝ Պատվիրատու) Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված 20.06.2019թ. թիվ 02/01.91/10840-19 գրությամբ հայտնել է, որ ներկայացրել է «ՀՀՄՆ-ԳՀԱՊՁԲ-19/33» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին վերաբերող բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը:

Պատվիրատուն տեղեկացրել է, որ հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017 թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 45-րդ կետը՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթաց նախաձեռնելու նպատակով մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, ՀՀ մշակույթի նախարարության գլխավոր քարտուղարի 31.05.2019թ. N 02/01.91/3563-19 գրությամբ ուղարկվել են Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 24.06.2019թ. ժամը 10:00-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցիչների մասնակցությունը, ովքեր հայտնել են, որ Ընկերությունը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունեցել է հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություն, ուստի ընկերության հայտը մերժվել է: :

3. ԳԲՔԱ-ՆԳ-2019/41 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ԳԲՔԱ-ՆԳ-2019/41 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից իր կարիքների համար հայտարարվել է «ՀՀՄՆ-ԳՀԱՊՁԲ-19/33» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով 25.04.2019թ. մի շարք չափաբաժինների մասով հայտ է ներկայացրել «Սոնատինա» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 26.04.2019թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 2 արձանագրությամբ կայացված որոշմամբ՝ «Սոնատինա» ՍՊԸ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից Ընթացակարգի թվով 14 չափաբաժինների մասով:

3. ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետի հիման վրա 06.05.2019թ. տրամադրված եզրակացության համաձայն՝ ***«Սոնատինա» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունի 135 000 ՀՀ դրամի չափով ժամկետանց պարտավորություն:***

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 23.05.2019թ. ժամը 10:00-ի նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ «Սոնատինա» ՍՊԸ-ի հայտը մերժվել է:

4. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով «Սոնատինա» ՍՊԸ-ի կողմից 18.06.2019թ. ներկայացված բողոքը՝ կից փաստաթղթերով, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության 20.06.2019թ. թիվ 02/01.91/10840-19 գրությունը՝ կից փաստաթղթերով, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ բացառությամբ սույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, ***գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի, քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ:***

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

«ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ դրոշմանիշային վճարը զինծառայողների կյանքին և առողջությանը պատճառված վնասների հատուցումն ապահովելու նպատակով սույն օրենքով սահմանված կարգով և չափով ՀՀ պետական բյուջե վճարվող պարտադիր վճար է, որի վճարման պարտականությունը կատարվում է յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանում սույն օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված չափով դրոշմանիշ գնելու միջոցով:

«Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի համաձայն՝ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտները՝ ՀՀ պետական և համայնքների բյուջեներ վճարվող հարկերի, տուրքերի և օրենքով սահմանված վճարների, դրանց նկատմամբ օրենքով սահմանված կարգով հաշվարկվող տույժերի և տուգանքների ամբողջությունն է, որոնց հաշվառումը, հաշվառման և (կամ) վճարման նկատմամբ հսկողությունը, մուտքերի ապահովման վերահսկողությունն օրենսդրությամբ վերապահված է հարկային մարմնին:

«ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 2-րդ մասի ժե) պարբերության համաձայն՝ հարկային եկամուտներն են՝ դրոշմանիշային վճարները:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի

բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում է ներկայացնում առաջին տեղն զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը:

Կարգի 44-րդ կետի համաձայն՝ Կոմիտեն սույն կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով տրամադրում է հարցման մասին տեղեկատվություն: Սույն կետով սահմանված ժամկետում կոմիտեից տեղեկատվության չստացման դեպքում մասնակցի ներկայացրած հայտարարությունները համարվում են իրականությանը համապատասխանող: Եթե կոմիտեի կողմից սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ կամ չի բավարարում հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի պահանջները, և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է: ***<u>Եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրած տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից:</u>*** Սույն կետով նախատեսված որակավորման չափանիշի գնահատման ժամանակ հաշվի է առնվում սույն կարգի 47-րդ կետով նախատեսված ընթացակարգը:

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից իր կարիքների համար հայտարարվել է «ՀՀՄՆ-ԳՀԱՊՁԲ-19/33» ծածկագրով գնանշման

հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով 25.04.2019թ. մի շարք չափաբաժինների մասով հայտ է ներկայացրել «Սոնատինա» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 26.04.2019թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 2 արձանագրությամբ կայացված որոշմամբ՝ «Սոնատինա» ՍՊԸ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից Ընթացակարգի թվով 14 չափաբաժինների մասով:

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետի հիման վրա 06.05.2019թ. տրամադրված եզրակացության համաձայն՝ ***«Սոնատինա» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունի 135 000 ՀՀ դրամի չափով ժամկետանց պարտավորություն:***

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 23.05.2019թ. ժամը 10:00-ի նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ «Սոնատինա» ՍՊԸ-ի հայտը մերժվել է:

Այսպիսով՝ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից տրամադրված եզրակացության համաձայն՝ «Սոնատինա» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունեցել է հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ մասով նախատեսված գնային առաջարկի մեկ տոկոսի շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություն (առավելագույն գնային առաջարկը կազմել է 1 750 000 ՀՀ դրամ՝ 14-րդ չափաբաժնի համար, իսկ նվազագույնը՝ 24 000 ՀՀ դրամ՝ 19-րդ չափաբաժնի համար), մինչդեռ Ընկերությունը հայտի թիվ 2 հավելվածով հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ՀՀՄՆ-ԳՀԱՊՁԲ-19/33» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին:

Կարգի 44-րդ կետը սահմանում է, որ եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած ***<u>հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրած տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից:</u>***

Տվյալ դեպքում արձանագրում եմ, որ «Սոնատինա» ՍՊԸ-ի կողմից հայտի թիվ 2 հավելվածով ներկայացված հայտարարությունը հանդիսանում է իրականությանը չհամապատասխանող, քանի որ Ընկերությունը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունեցել է հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով Օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություն:

Գտնում եմ, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, մերժելով Ընկերության հայտը, գործել է իրավաչափ և առաջնորդվել Կարգի 44-րդ կետի պահանջներով, քանի որ նշված կետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովի կողմից հիմք է ընդունվել ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից սահմանված կարգով տրամադրված եզրակացությունը՝ Ընկերության հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների վերաբերյալ:

Ընկերությունը նշել է, որ արձանագրված պարտավորությունը հանդիսացել է դրոշմանիշային վճար, որը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ տեսանելի չի եղել Ընկերության անձնական քարտի քաղվածքում և Ընկերությունը տեղեկացված չի եղել նշված պարտավորության վերաբերյալ, այս առումով հայտնում եմ, որ ՀՀ պետական եկամուտների կոմիտեն 10.05.2019թ. թիվ 3-4/17950-2019 գրությամբ հայտնել է, որ ՊԵԿ «Հաշվետվությունների ներկայացման էլեկտրոնային համակարգի» «Հարկային պարտավորություններ» բաժնում 2018թ. նոյեմբեր ամսից տեղադրված է հետևյալ հաղորդագրությունը՝

«Սույն քաղվածքում դրոշմանիշային վճարների գծով պարտավորությունների կամ սահմանված չափից ավել վճարված գումարների վերաբերյալ տեղեկությունները արտացոլված չեն: Նշված տեղեկությունները ստանալու համար անհրաժեշտ է դիմել սպասարկման բաժին»:

«ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն դրոշմանիշային վճարը ՀՀ պետական բյուջե վճարվող պարտադիր վճար է, որը «ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 2-րդ մասի հիման վրա հանդիսանում է հարկային եկամուտ և հիմք ընդունելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածը՝ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտները՝ ՀՀ

պետական և համայնքների բյուջեներ վճարվող հարկերի, տուրքերի և օրենքով սահմանված վճարների, դրանց նկատմամբ օրենքով սահմանված կարգով հաշվարկվող տույժերի և տուգանքների ամբողջությունն է, որոնց հաշվառումը, հաշվառման և (կամ) վճարման նկատմամբ հսկողությունը, մուտքերի ապահովման վերահսկողությունն օրենսդրությամբ վերապահված է հարկային մարմնին:

Այսպիսով, հաշվի առնելով վերոգրյալը, գտնում եմ, որ «Սոնատինա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքն անհիմն է և ենթակա է մերժման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

«Սոնատինա» ՍՊԸ-ի կողմից 18.06.2019թ. ներկայացված բողոքը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**